



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 05 » *Մարտի* 2024թ.
ք. Արմավիր

N ՄՈ/133 -Ա

**«ԳՐԻՔՈՅԵԴՈՎԻ Վ. ՌՈՍՏՈՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2024 թվականի մարտի 5-ի N ՄՈ/131-Ա և N ՄՈ/134 -Ա որոշումները, «Գրիքոյեդովի Վ. Ռոստոմյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում փաստաթղթերի հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

որոշում եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին (Գ. Գևորգյան)՝ հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել «Գրիքոյեդովի Վ. Ռոստոմյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ Մաքս Սահակյանին (համաձայնությամբ):
3. Հանձնաժողովին (Գ. Գևորգյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել հինգ աշխատանքային օրվա ընթացքում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը (պետ Վ. Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
5. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչությանը

(գլխավոր մասնագետ Ա. Համբարձումյան)' աշխատանքներն իրականացնելու համար
ապահովել հերթապահ մեքենայի տրամադրումը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:



ՄԱՐԶՊԵՏ՝

2024-03-05 16:45:20 GMT+4
Հավաստված է էԿԵՆԳ-ի կողմից

eID

Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆ



Հավելված

Հայաստանի Հանրապետության

Արմավիրի մարզպետի

2024 թվականի Մայիսի 05 ի

N ՄՈ/133 -Ա որոշման

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Գ. Գևորգյան -

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի աշխատակազմի
կրթության, մշակույթի և սպորտի վարչության
ավագ մասնագետ

Անդամներ՝

Շ. Խաչատրյան -

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի աշխատակազմի
կրթության, մշակույթի և սպորտի վարչության
գլխավոր մասնագետի պաշտոնակատար

Զ. Եղոյան -

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի աշխատակազմի
ֆինանսական վարչության գլխավոր մասնագետ

Հանձնող՝

Էդվարդ Պետրոսյան -

«Գրիբոյեդովի Վ. Ռոստոմյանի անվան
միջնակարգ դպրոց» պետական
ոչ առևտրային կազմակերպության նախկին
տնօրեն

Ընդունող՝

Սուսաննա Մանուկյան -

Գրիբոյեդովի Վ. Ռոստոմյանի անվան
միջնակարգ դպրոց» պետական
ոչ առևտրային կազմակերպության տնօրենի
պաշտոնակատար

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

05.03.2024

XiRkOzhenk

VERIFIED OCSP 05.03.2024 16:10:32 GMT+4

Подписано: HOVNANNISYAN ARAM 3812640023

